«Նոր ժամանակի կրթություն» ՀԿ

ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԴԱՍԸՆԹԱՑ

ԱՎԱՐՏԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Հետազոտության թեման՝ Ուսուցչի համագործակցությունը սովորողների ծնողների կամ նրանց օրինական ներակայացուցիչների հետ , սովորողների կրթության կազմակերպման և դաստիարակության հարցերում

Առարկան ՝ Հայոց լեզու և գրականություն

Հետազոտող ուսուցիչ՝ Հասմիկ Մարեմկոյան

Երևանի Մոնթե Մելքոնյանի անվ. 11 հիմնական դպրոց

Երևան 2023

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ.....3

ԳԼՈՒԽ 1

ՈՒՍՈՒՑՉԻ ԴԵՐԸ ՍՈՎՈՐՈՂՆԵՐԻ ՈՒՍՈՒՑՄԱՆ ԵՎ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅԱՆ ՀԱՐՑՈՒՄ.....5

ԳԼՈՒԽ 2

ԸՆՏԱՆԻՔԻ ԴԵՐԸ ՍՈՎՈՐՈՂՆԵՐԻ ՈՒՍՈՒՑՄԱՆ ԵՎ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՒՄ.....9

ԳԼՈՒԽ 3

ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ՄԱՍ.....15

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ.....25

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ.....26

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Հասարակության որակը կախված է զարգացած, կրթված անհատներից, որոնք պետք է կազմեն հասարակության բովանդակային կորիզը, պետք է պատասխանատու և ծանրակշիռ լինեն ոչ միայն իրենց մասնավոր կյանքի ու կյանքի որակի համար՝ անհաղորդ ու անտարբեր մնալով հասարակությանը և ազգային խնդիրներին, այլև պետք է լինեն ակադեմիական հիմնարար գիտելիքներով զինված, մեր ժամանակների նորագույն ձեռքբերումներին քաջատեղյակ, ազգային գործոնն առաջ մղող, մարդկային բարձր արժանապատվությամբ և շրջահայեցությամբ օժտված առաջնորդներ, որոնք կհամալրեն հանրային կյանքի բոլոր բնագավառները:

Ուսուցումն ու դաստիարակությունը գտնվում է անխախտելի միասնության մեջ: Ուսուցման միջոցով մենք դաստիարակում ենք սովորողներին և ընդհակառակը: Այս երկու գործընթացները բարդ և ժամանակատար են: Ուսուցման միջոցով բազմաթիվ դաստիարակչական խնդիրներ են լուծվում, միևնույն ժանանակ պետք է նշեմ, որ թեև ուսուցմամբ կարելի է դաստիարակչական խնդիրներ լուծել, սակայն մատաղ սերնդին հանրության համար կարևոր նշանակություն ունեցող արժեքների պատվաստումն իրականացվում է հիմնականում այլ գործոնների շնորհիվ: Դա ժողովրդավարական համակարգի տարրերի առկայությունն է հասարակական կառուցվածքներում, ուսումնական գործընացի ընդհանուր կուլտուրան է, կրթական համակարգում հաստատված բարոյահոգեբանական առողջ մթնոլորտը, սովորողների և ուսուցիչների հարաբերությունների ժողովրդավարական ոճը, ի վերջո՝ օրենքի գերակայության հաստատումն ու նրա հարգումը կրթության բոլոր սուբյեկտների կողմից: Կարճ ասած, դաստիարակության մեջ որոշիչը միջավայրն է. եթե հասարակությունն ինքը չի ապրում ժողովրդավարական արժեքներով, դրանք չի կարող մատուցել և ստիպել նրանցով ապրել իր սերունդներին: Մարդն ընդօրինակում և վարքի նորմա է դարձնում այն ամենը, ինչ տեսնում է, ինչի ներգործությունն իր վրա զգում է, ինչը կարևորում է իր սոցիալական առաջընթացի ու բարոյական հասունացման համար: Ուրեմն դաստիարակության ու սոցիալականացման խնդիրներում խոսքն ու խրատը, քարոզը, արհեստականորեն ստեղծված կարգ ու կանոնը որոշիչ չեն, որոշիչ են կրթության սուբյեկտների միջև հարաբերությունների ընդհանուր կուլտուրան, աշխատանքային և ուսումնական նորմալ պայմանները, ուսումնական պրոցեսում սովորողների ազատության և ինքնուրույնության աստիճանը, բարոյահոգեբանական առողջ մթնոլորտը:Դաստիարակության ընդհանուր ռազմավարության և օպտիմալ տեխնոլոգիաների բացակայության

պայմաններում ուսուցչի դերն առավել կարևորություն է ստանում: Ուսուցչի բարոյական նկարագիրը, մեթոդական պատրաստվածության մակարդակը, նրա անձնային ու ինտելեկտուալ որակները դաստիարակչական մեծ ներուժ ունեն:

Ուսուցչի կատարած աշխատանքը սովորողների ուսումնադաստիարակչական գործընթացի իրականացման ճանապարհին միանգամայն փոխվում է, երբ նրան միանում են ծնողները կամ սովորողների օրինական ներկայացուցիչները: Այս հետազոտության շրջանակում կփորձենք պարզել վերը նշվածը, ուստի սահմանենք մեր աշխատանքի նպատակն ու խնդիրները:

Հետազոտության նպատակը՝ բացահայտել ուսուցիչների աշակերտների ծնողների և օրինական ներկայացուցիչների հետ համագործակցության լավագույն միջոցներն ու հնարները և գրանցել դրանց արդյունավետությունը:

Հետազոտության խնդիրները՝

- ուսումնասիրել թեմային առնչվող գրականությունը,
- կազմակերպել սովորողների կրթությունը և ընտանեկան դաստիարակությունը ՝ համագործակցելով երեխաների ծնողների և օրինական ներկայացուցիչների հետ,
- սովորողների դաստիարակությանը մասնակից դարձնել նաև ծնողներին և նրանց օրինական ներկայացուցիչներին և բացահայտել, թե ինչպես է ընթանում սովորողների դաստիարակությունը դպրոցի պատերից դուրս:

ԳԼՈՒԽ 1

ՈՒՍՈՒՑՉԻ ԴԵՐԸ ՍՈՎՈՐՈՂՆԵՐԻ ՈՒՍՈՒՑՄԱՆ ԵՎ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅԱՆ ՀԱՐՑՈՒՄ

Մարդկության կողմից ստեղծված նյութական և հոգևոր արժեքներն իրենց արտացոլումն են գտնում կրթության և դաստիարակության բովանդակության մեջ, մանկավարժի ստեղծագործական գործունեության միջոցներում: Մանկավարժական մշակույթը ընդհանուր մշակույթի մի մասն է, այդ մասին ժամանակին գրել են Յան Ամոս Կոմենսկին, Մ. Վ. Լոմոնոսովը, Կ. Դ. Ուշինսկին: Ըստ Վ. Ա. Սուխոմլինսկու՝ մանկավարժական մշակույթի մեջ պետք է առանձնացնել հետևյալ բաղադրիչները՝

• մարդասիրությունը, աշակերտի մտքին և սրտին անմիջականորեն դիմելը,

• իր առարկայի խոր իմացությունը, մանկավարժական գործընթացի բոլոր նրբություններին տիրապետելու ունակությունը, մանկավարժի հուզականությունը, զգայունակությունը, զգացմունքայնությունը,

• գործունեության տարբեր ձևերում երեխայի անհատական, տարիքային, հոգեբանական առանձնահատկությունների ուսումնասիրման մեթոդների հարստությունն ու բազմազանությունը,

• մանկավարժի ստեղծագործական լաբորատորիայի առկայությունը,

• մանկավարժի գործունեության մեջ հոգեբանական ամուր հիմքը,

• ուսուցչի լեզվական մշակույթը, խոսքի մատչելիությունը, տրամաբանությունը, դիտողականությունը, ինքնավերահսկումը, արտահայտչամիջոցների հղկվածությունը[1]: Մանկավարժի վարքը ուսուցչի անհատական մանկավարժական մշակույթի դրսևորումն է: Մանկավարժական մշակույթը այն հիմնաքարն է, որի վրա ձևավորվում է ուսուցչի մանկավարժական վարպետությունը: Մանկավարժական մշակույթի կառուցվածքը բազմաշերտ է և ներառում է բարոյական տեսանկյուններ, անձի հոգևոր ներաշխարհի դրսևորման միջոցները հաղորդակցման և գործունեության մեջ: Ապագա մանկավարժի արտաքին և ներքին մշակույթի փոխադարձ կապը նպաստում է մասնագիտական իդեալի վերաբերյալ

[1] Сухумлинский В. А., Избранные педагогические сочинения в 3 т., т. 1, стр. 87,

պատկերացումների որոշակիացմանը, այդ իդեալին հասնելու ուղիների որոնմանը: Մանկավարժական մշակույթը մի կողմից ըմբռնվում է որպես ուսուցչի հոգևոր–բարոյական մշակույթ, մանկավարժական գործունեության մշակույթ (նպատակ–միջոցներ–արդյունք–վերլուծություն), մտածողության, ստեղծագործական մշակույթ, գործունեության մեջ ինքնարտահայտման և անդրադարձ կատարելու ունակության, երեխային հոգեբանամանկավարժական աջակցության մշակույթ:

Այսպիսով՝ մանկավարժական մշակույթը ձևավորվում և զարգանում է ընդհանուր մշակույթի հիման վրա: Այն հոգեբանամանկավարժական համոզմունքների և վարպետության, ընդհանուր զարգացման և մասնագիտական–մանկավարժական հատկանիշների միասնություն է: Միաժամանակ մանկավարժական մշակույթը տարբեր «մշակույթների» իմացական, հաղորդակցական, մեթոդաբանական, խոսքի զարգացման և այլն, պարզագույն հանրագումար չէ: Դա ամբողջական կրթություն է, որը դրսևորվում է մի կողմից՝ որպես ուսուցչի մանկավարժական վարպետության բաղադրիչ, մյուս կողմից՝ որպես մանկավարժական վարպետության ձևավորման գործընթացում ձեռք բերված արժեք:

Հասարակության որակը կախված է զարգացած, կրթված անհատներից, որոնք պետք է կազմեն հասարակության բովանդակային կորիզը, պետք է պատասխանատու և ծանրակշիռ լինեն ոչ միայն իրենց մասնավոր կյանքի ու կյանքի որակի համար՝ անհաղորդ ու անտարբեր մնալով հասարակությանը և ազգային խնդիրներին, այլև պետք է լինեն ակադեմիական հիմնարար գիտելիքներով զինված, մեր ժամանակների նորագույն ձեռքբերումներին քաջատեղյակ, ազգային գործոնն առաջ մղող, մարդկային բարձր արժանապատվությամբ և շրջահայեցությամբ օժտված առաջնորդներ, որոնք կհամալրեն հանրային կյանքի բոլոր բնագավառները:

Բարեփոխությունների անշրջելի ընթացքը ժամանակակից կրթական համակարգի առանձնահատկությունն է: Կրթական ոչ մի համակարգ չի կարող արդյունավետ գործել համաշխարհային կրթական գործընթացներից դուրս և այդ ամենից մեկուսացած: Գիտության, տեխնիկայի աննախադեպ առաջընթացը նոր մոտեցումներ ու պահանջներ է սահմանում նաև կրթամշակութային ոլորտի համար:

Օրվա հրամայականն են դառնում ուսուցման նոր մեթոդների որոնման, կրթության բովանդակության նորացմանը միտված աշխատանքները: Անընդհատ

փոփոխվող աշխատանքային միջավայրում, արագորեն վերակազմավորվող աշխատաշուկայում ավելի ու ավելի է կարևորվում որակյալ ուսուցման և որակյալ մասնագետների պահանջը, ինչը բնականորեն նպաստում է հանրակրթության դերի բարձրացմանը: Կրթությունը դառնում է հասարակության զարգացման խթանիչ ուժ՝ միաժամանակ ապահովելով նաև մարդկային համակեցության ներդաշնակ պայմաններ հասարակության բոլոր շերտերի համար: Հանրակրթության ոլորտում տեղի ունեցող համակարգային փոփոխությունները, որոնք պայմանավորված են համաշխարհային զարգացումներով, ենթադրում են ուսուցման ավանդական մոտեցումների վերանայում և վերաիմաստավորում, կրթության ոլորտում ազգային առանձնահատկությունների և միջազգային փորձի արդյունավետ համադրում: Այս 2 պայմաններում արդեն կարևոր խնդիր է դառնում պետական-ազգային մտածողություն ունեցող և կյանքի արագընթաց զարգացումներին հաղորդակից անհատի ձևավորումը, ինչի իրականացմանն էլ պետք է ուղղված լինի կրթական քաղաքականությունը: Բայց նախ և առաջ ուսուցիչն ինքը պետք է լինի այդպիսին: Անդրադառնանք ուսուցչի կերպարին և դերին:

Ուսուցչի համար կարևոր է իր պրակտիկ գործունեության վերլուծության, կատարելագործման, ինքնազարգացման, շարունակական կրթության համար գիտամանկավարժական տեսական գիտելիքներից օգտվելու կարողությունը:

Տեսությունը, որը չի հիմնվում պրակտիկայի վրա, անհիմն է, և կրում է մտահայեցողական բնույթ: Մանկավարժական հետազոտությունը ինքնանպատակ չէ,այն պետք է արտացոլի առաջավոր փորձը, ստուգվի պրակտիկայում և նպաստի ուսումնադաստիարակչական խնդիրների լուծմանը: Առանց պրակտիկ գործունեության խոր և համակողմանի վերլուծության անհնար է նախանշել ուսումնադաստիարակչական գործընթացի զարգացման ուղիները:

Մանկավարժական մեթոդաբանության մեջ կարևոր է հիմնախնդրի նկատմամբ ստեղծագործական մոտեցման սկզբունքը: Փորձը ցույց է տալիս,որ մանկավարժական շատ հիմնախնդիրներ հաջողությամբ լուծելու համար անհրաժեշտ է դրսևորել ստեղծագործական մտածողություն: Հետազոտության ընթացքում պետք է որոնել նոր տվյալների, երևույթների փաստարկված բացատրություն, համալրել և ճշտել առկա տեսակետները, չվախենալ գիտական համարձակության դրսևորելուց: Հետազոտողի վարպետությունը այն է, որ ուղիներ և միջոցներ գտնի երևույթների էության մեջ թափանցելու համար, չդրսևորելով սուբյեկտիվություն, սրա հիմքը մարդկանց պրակտիկ գործունեությունն է:

Մանկավարժական հետազոտության արդյունավետությունը մեծապես կախված է մանկավարժական գործընթացների ու երևույթների համակողմանի ուսումնասիրությունից:

Որպեսզի հասնենք ցանկալի արդյունքի մենք սահմանել ենք որոշակի քայլարշավ.

1. ստեղծել ենք բարյացակամ միջավայր,

2. ապահովել, որ բոլորի ձայները լսելի լինեն,

3. ընտանիքներին ընձեռել ենք մեզ հետ համագործակցելու հնարավորություն,

4. առաջնորդվել ենք մեր աշակերտների անհատական կրթական կարիքներով,

5. աջակցություն ենք ստացել դպրոցի տնօրենից ՝ համագործակցել կոլեգաների հետ, մասնակցել դասապրոցեսներին, փոփոխել դասացուցակը

ԳԼՈՒԽ 2

ԸՆՏԱՆԻՔԻ ԴԵՐԸ ՍՈՎՈՐՈՂՆԵՐԻ ՈՒՍՈՒՑՄԱՆ ԵՎ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՒՄ

Բարոյապես անբասիր անձնավորության ձևավորումը որքան կարևոր, նույնքան և դժվարին խնդիր է: Որքան էլ մեծ է ուսուցչի հսկա աշխատանքը, այնուամենայնիվ այստեղ բախտորոշ դեր է կատարում ընտանիքը:

Երբեք չի հնանում կենսական այն ճշմարտությունը, ըստ որի , ոչ մի խելոք խոսք ու խրատ այնքան արձագանք չեն գտնում մանկան արթուն հոգում, որքան ծնողների և մերձավորների իրական կյանքն ու բարքը:

Կյանքի կենդանի տպավորություններն անհամեմատ զորեղ են ու ներգործուն: Երեխայի զգայուն հոգին որսում է մարդկային հարաբերությունների այնպիսի նրբերանգներ, որ շատ անգամ կարող են վրիպել չափահասների ուշադրությունից: Որեմն իր զավակների դաստիարակության մասին հոգացող ծնողը նախ պետք է շիտակ պատասխան տա այն հարցին, թե ինչպիսին է ի՛ր կյանքը:

Մարդկության դարավոր կենսափորձը սերնդեսերունդ կուտակվելով, ամրապնդվում է , դառնում օրենք, ավանդույթ, բարոյականության չափանիշ, համակեցության կանոն և, ժամանակի ընթացքում ենթարկվելով հասարակական տեղաշարժերով թերադրված փոփոխությունների, որոշակի հունի մեջ է դնում անձի վարքագիծը, նաև հեշտացնում աճող սերնդի դաստիարակությունը: Պատահական չէ, որ օրինապահ, ավանդապահ, տֆվյալ երկրի ու ժողոբրդի բարոյական չափանիշներին ներդաշնակ ապրող չափահասների միջավայրում երեխաների դաստիարակությունը ընթանում է անհամեմատ հարթ: Զավակները փոքր ու մեծ են ճանաչում , գիտակցում են իրենց պարտականությունները և չեն զլանում դրանք կատարել, անհամեմատ բարեկիրթ են: Նրանց հոգում մանկուց ծլարձակում և արմատ է գցում այն համոզմունքը, որ բարոյական մարդու խոսքի ու վարքի միջև հակասություն չկա:

Մինչդեռ ինչքան քիչ բան է խոստանում և ինչ վտանգներով է հղի դաստիարակությունն այն երեխայի, ում ծնողները կամ օրինական ներկայացուցիչները խոսում են ազնվությունից, բայց չեն խորշում կեղծելուց, խոսում են մարդկային բարձր որակներից և շատ անգամ անտեսում դրանք, խոսում են բարությունից, բայց կարող են այս կամ այն կոնկրետ իրադրությունում ունենալ անսիրտ ու անողոք վարվեցողություն:

Կյանքի կենդանի տպավորությունները , կաթիլ-կաթիլ կուտակվելով, ստեղծում են հոգեկան որակ: Երախան նմանվում է ծնողին՝ ընդօրինակելով ապրելու նրա եղանակը:

Ուսուցիչը քաջ գիտակցելով, որ տարբեր երեխաներ տարբեր ընտանիքներից են գալիս ՝ պետք է կարողանա դաստիարակել զգացմունքներ: Իսկ ի՞նչ ասել է դաստիարակել զգացմունքներ: Այս հարցում հատկապես բացառիկ է ընտանիքի դերը: Ինչի՞ նկատմամբ ենք մենք զգացմունքներ տածում: Այն ամենի, ինչ ճանաչում ենք: Անտեղյակությունն ուղեկցվում է անտարբերությամբ: Իր արյունակից հարազատին չտեսած երեխան չի կարող նրան խորապես սիրել, որքան էլ կամենա: Զգացմունքը՝ լինի այն սեր թե ատելություն, հպարտություն, հիացմունք թե արհամարհանք, ծնվում է իրական շփումներից: Պատահական չէ, որ երեխան ջերմ զգացմունքով կապվում է այն մարդկանց, ում ձեռքերին մեծացել է և այն վայրերին, որտեղ ծնվել ու ապրել է: Երեխան չի կարող հայրենասեր լինել , եթե չճանաչի իր երկիրը՝ նրա բնությունը, մարդկանց, չիմանա նրա պատմությունը, երգերը , լեզուն: Ուրեմն, զգացմունքների հարստացման կարևոր պայմանը՝ երեխայի բազմազան շփումներն են աշխարհի հետ, տպավորությունների հարստությունը: Ամեն մի զգացմունք մարդու ապրած բազմաթիվ հույզերի ընդհանրացումն է:

Շատ մեծ գրողներ, մանկավարժներ ու հոգեբաններ վկայում են, թե անձի հոգեկան դիմագծի հարցում ինչքան բախտորոշ դեր ունի վաղ մանկական տարիների նրա կյանքը: Այս, թերևս, հոգեկան գործունեության ոչ մի կողմին չի վերաբերում այնքան, որքան զգացմունքներին: Ամենապայծառ լույսը, որ ջերմացնում է մանկան հոգին, ծնողների սերն է ու գորովը:

Երեխայի երջանկության համար կարևոր է ոչ այնքան այն, թե որքան լի ու առատ է նա ապրել, և ոչ այն, թե որքան գիտելիք է ձեռք բերել, որքան այն, թե բարոյական ինչ նկարագիր ունի և առաջին հերթին՝ բարոյական զգացմունքների ինչպիսի հարստություն:

Չենք կարող չանդրադառնալ այնպիսի կարևոր երևույթի ինչպիսին գեղագիտական դաստիարակությունն է: Որքան մեծանում է երեխան, այնքան ավելի նոր, բազմազան ուղիներ են բացվում՝ զարգացնելու նրա գեղագիտական ճաշակն ու զգացմունքները: Բազմապատկվում են երեխայի շփումները գեղեցիկի հետ, որ ստեղծել են բնությունն ու մարդը: Եվ որքան պարբերական ու նպատակաուղղված են այս շփումները, այնքան մեծ է երաշխիքը գեղագիտական զգացմունքների հարստության: Դասերի ընձեռածհնարավորությունները լրացվում են

ընթերցանությամբ, էքսկուրսիաներով, տուրիստական արշավներով, համերգների ունկնդրումով, կինոֆիլմերով ու ներկայացումներով:

Շատ կարևոր է, որ այս հարցում ծնողը չկորցնի չափի զգացումը, չջանա արհեստականորեն առաջ ընկնել երեխայի զարգացման ռեալ հնարավորություններից: Զգացմունք կարող է հարուցել այն, ինչ երեխայի կողմից ընկալվում է: Եթե երեխային պարտադրվեն այնպիսի գրքեր, որոնք բարդ են նրա հոգեկան զարգացման մակարդակի համեմատ, ապա շատ ավելի հավանական է, որ նա, առհասարակ, կորցնի ընթերցելու ցանկությունը: Որևէ լուրջ ֆիլմում ձանձրացող փոքրիկը բուռն հրճվանքով է դիտում հերթական ուրախ մուլտֆիլմը: Ամեն մի հասակ պահանջում է իրեն պատշաճ հոգեկան սնունդ:

Դպրոցական տարիքում, գործունեության բնույթի փոփոխությունների հետևանքով, թե՛ հարստանում է գեղագիտական զգացմունքների բովանդակությունը, թե՛ նրանց դրսևորման ձևերն են փոխվում: Կուլտուրական վարքի հմտությունների ձևավորումը, զսպվածությունը, կամքի ձևավորմանը համընթաց հույզերն սկսվում են դրսևորվել համեմատաբար սակավ անմիջականությամբ:

Զգացմունքները, իհարկե, արտաքին դրսևորման ավելի մեծ հնարավորություն ունեն, քան հոգեկան մյուս կողմերը: Բայց ճիշտ չի լինի, եթե այդ դրսևորումով չափվի երեխայի զգացմունքների հարստությունը: Հուզական ռեակցիաների ուժը , տեմպը և ռիթմը ավելի շատ կախված են երեխայի կամային-տիպային հատկություններից:

Եթե վաղ հասակում երեխայի հայացքը շոյում էր միայն ֆիզիկապես գեղեցիկը, ապա ավելի ուշ գեղագիտական զգացմունքների աղբյուր են դառնում նաև բարոյապես գեղեցիկը, մարդկային գեղեցիկ արարքները:

Ինչ խոսք, արտաքին գեղեցկությունը շատ ավելի ակներև է , այն արժեքավորելը և նրանով հիանալը շատ ավելի դյուրին, քան բարոյապես գեղեցիկը արժեքավորելը:

Շատ բան արած կլինի ծնողը իր զավակի հոգեկան հարստության համար, եթե նրա գիտակցությունն ուղղի բարոյապես գեղեցիկին, հակի նրան դեպի բարոյապես գեղեցիկ արարքները: Մինչդեռ, երբեմն արտաքին գեղեցկության նկատմամբայն բծախնդիր, աչքաթող են անում մարդկային արարքների, վարքի գեղեցկությունը:

Դաստիարակել երեխայի մեջ գեղագիտական զգացմունք նշանակում է նաև ապահովել նրա կենցաղի, սովորությունների գեղեցկությունը:

Տխուր է , բայց կան երեխաներ, որոնք ուրիշին անախորժություններ պատճառելը, ծաղրելն ու զայրացնելը ոչ միայն տգեղ չեն համարում, այլև համարում են քաջություն, գովասանքի արժանի բան: Նրանք հաճախ իրենց չարախնդության օբյեկտ են դարձնում իրենց հեզաբարո, զգայուն հասակակիցներին, և որքան խորն է տառապում վերջինս, այնքան ավելի անողոք են դառնում: Երբեմն ծնողները անտարբեր են մնում այդպիսի միջադեպերի նկատմամբ՝ համարելով դրանք անվնաս չարաճճիություն: Մինչդեռ սա չարիք է ոչ միայն հալածվող երեխայի համար, որը հոգեպես ճնշվում, վիատվում է, այլև հարձակվողի համար, որի էության մեջ ծլարձակում են հոգու այնպիսի արատներ, որպիսիք են չարությունն ու դաժանությունը:

Սոցիալական ինստիտուտների մեջ անգնահատելի է ընտանիքի դերը, որպես մարդկության կողմից պատմական երկարատև զարգացման ընթացքում ստեղծված մեծագույն արժեք, որի զարգացմամբ շահագրգռված են և՛ հասարակությունը, և՛ պետությունը: Երկար դարերի ընթացքում հայ ժողովուրդը մշակել է իր վերաբերմունքը ընտանիքի նկատմամբ, քանի որ այն հայերի համար մեծագույն սրբություն է և սոցիալական կյանքի հիմք: Ընտանիքը սերտորեն կապված է պետության և հասարակության զարգացման հետ: Այն շատ արագ արձագանքում է հասարակության մեջ տեղի ունեցող բոլոր դրական և բացասական փոփոխություններին: Սակայն ընտանիքը միշտ չէ, որ համապատասխանության մեջ է գտնվում տվյալ դարաշրջանի սոցիալ–տնտեսական իրականության հետ: Նրա դրսևորման հիմքերից մեկը ընտանիքի կենցաղավարման միջավայրն ու փոփոխվող սոցիալ–քաղաքական պայմաններն են: Այս առումով կարևոր նշանակություն ունի ընտանեկան կենցաղում տեղ գտած մի շարք սովորույթների ծագման, պատմական զարգացման ընթացքում դրանց փոփոխությունների, կենցաղավարման ձևերի բացահայտումը[2]:

Մարդկային հոգու բոլոր ելևէջները,ի վերջո, դրսևորման երկու եղանակ ունեն՝ շարժում և խոսք: Բնական է, որ երեխաների գեղագիտական դաստիարակության

---

[2] Անաստասյան Բ. Հ., Ազգային ավանդույթների, սովորույթների դերը երեխաների ընտանեկան դաստիարակության գործում, Ընտանիք և ազգային հոգեբանություն նյութերի ժողովածու, Եր., ՀՀ լուսավորության նախարարության մանկավարժական գիտությունների գիտահետազոտական ինստիտուտ, 1991,

մասին խոսելիս անհնարին է շրջանցել հոգեկան այնպիսի մի պրոցես, որպիսին խոսքն է:

Միշտ չէ, որ մենք արժանի կարևորություն ենք տալիս երեխաների խոսքի կուլտուրային: Նրանցից շատերի համար գոյություն ունի խոսքի երկու տարբերակ, երկու մակարդակ: Մեկն, այսպես ասած, դպրոցի , դասերի համար նախասահմանված խոսքն է, որ պահանջում է լեզվական բծախնդիր մաքրություն, ճշտություն , բարեհնչութնություն: Մյուսը ընտանիքում և խաղընկերների հետ փոխանակվող խոսքը, որ անփույթ է , խառնալեզու, համեմված մակաբույծ բառերով: Երեխաներ կան , հատկապես տղաներ , որոնք նույնիսկ անհարմար բան են համարում իրենց մտերմիկ շրջաններում խոսել կիրթ, գեղեցիկ հայերենով:Նրանք ցուցադրաբար խոսում են միտումնավոր կերպով գռեհկացած ժարգոնով: Ընտանիքը շատ անգամ անտարբեր է այսպիսի փաստերի նկատմամբ: Կարևոր է, որ երեխան իր խոսքի կուլտուրային հետևի ամենուրեք, որ նրա մեջ մշակվի գեղագիտական զգացմունք նաև խոսքի նկատմամբ: Իսկ եթե որդին տեսնի, թե ինչպիսի գեղեցիկ բառապաշար ունի հայրը, ապա նա անպայման կյուրացնի հենց այդ բառապաշարը: **Ծնողն ունի հեղինակություն իր երեխայի մոտ և հետևաբար , երեխան փորձելու է նմանվել հորը:**

Գեղարվեստական խոսքն ունի մարդկային հոգիների վրա ներգործելու ոչ պակաս զորություն, քան մյուս արվեստները: Լավ է, երբ մարդ այդ խոսքի հմայքին հաղորդակից է դառնում դեռևս մանկուց:

Գեղագիտական զգացմունքների դաստիարակության հարցում ռիթմիկ, զրնգուն բանաստեղծությունները, լավ ընթերցված հեքիաթներն ու պատմվածքները նույնքան կարևորե են, որքան երաժշտությունն ու նկարչությունը:

Ինչպես ամեն մի զգացմունք , գեղագիտական զգացմունքներն ինքնին չեն հարստանա, նրանք ևս սնունդ են պահանջում:

Գեղարվեստի զգացողություն ունենալու, նրա պատշաճ հույզերն ապրելու համար երեխան պետք է մշտապես սերտ շփումներ ունենա բնության, նաև գրքի ու արվեստների հետ: Խզվեց այդ կապը՝ արվեստի զգացողությունը կբթանա. կխամրեն, իրենց ուժն ու խորությունը կկորցնեն նաև գեղագիտական զգացմունքները:

Գեղագիտական զգացմունքն անհագուրդ է: Որքան ավելի սերտ ես շփվում գեղեցիկի հետ, այնքան խորն ես հասկանում գեղեցիկը,այնքան մեծ ու բուռն են լինում այդ իմացության հարուցած զգացմունքները:

Այս հարցը քննելիս չենք կարող չանդրադառնալ նաև մշակույթին: Մշակույթն, անշուշտ, զգալի չափով ինքնաբուխ ստեղծագործական աշխատանքի արդյունք է: Սակայն նրա տարբեր տեսակների ու ձևերի գործառնական նշանակությունը կարելի է տեսնել բավականին հստակորեն: Մշակույթի կարևորագույն ֆունկցիաներից մեկը նրա մանկավարժական ֆունկցիան է՝ նրա դաստիարակչական և ուսուցողական նշանակությունը: Մենք առանց դժվարության կարող ենք տեսնել, որ մշակույթի մի շարք բնագավառներ իսկապես ունեն իրենց յուրահատուկ մանկավարժական ֆունկցիաները.

1 երգերը ծառայում են մարդկանց գեղագիտական և հայրենասիրական դաստիարակության համար,

2 ասացվածքները՝ սոցիալ-բարոյական դաստիարակության. սոցիալականացման միջոցներ են,

3 հեքիաթները նպաստում են ընթերցողների գեղագիտական և հայրենասիրական դաստիարակությանը՝ միաժամանակ նպաստելով նաև երևակայության զարգացմանը,

4 հանելուկները ոչ միայն ժամանցի համար են, այլև մեծապես նպաստում են մարդու մտածողության և ինտուիցիայի զարգացմանը :

ԳԼՈՒԽ 3

ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ՄԱՍ

Առարկա՝ Մայրենի

Դասարան՝ 6-րդ

Դասի թեման՝ Հովի. Շիրազ, «Մայրս փոքրիկ, մայր խեղճ», մենիմաստ, բազմիմաստ բառեր[3].

Դասի տեսակը՝ ամրապնդում

Նպատակը ՝ ամփոփել ստացած գիտելիքների պաշարը,զարգացնել բանավոր և գրավոր խոսքը, ինքնուրույն և խմբային աշխատելու կարողություններ և հմտություններ ձևավորել, ամրապնդել դասի նյութը, համագործակցել ծնողների կամ օրինական ներկայացուցիներների հետ:

Մեթոդները՝ զրույց,դասի զեկուցող, կախարդական արկղ, Т – ձև աղյուսակ,Շրջագայություն պատկերասրահում, ես ասեմ, դու կռահիր.

Միջոցները՝ դասագիրք, աշխատանքային տետր, բառատետր, գունավոր նշագրիչներ, կավիճներ,պաստառներ, էլեկտրոնային գրատախտակ, սահիկաշար, երգեր:

Վերջնարդյունքը՝ սովորողները կիմանան Հովի. Շիրազ, «Մայրս փոքրիկ, մայր խեղճ» ստեղծագործությունն անգիր, կկարողանան վերլուծել, կհարստանա սովորողների բառապաշարը, ինքնուրույն և խմբային աշխատելու կարողություններ և հմտություններ ձեռք կբերեն, կիմանան մենիմաստ և բազմիմաստ բառերի բազմաթիվ օրինակներ , կկարողանան դրանք կիրառել խոսքում:

Ընթացքը՝ դասի մեկնարկին ուսուցիչն ընտրում է դասի զեկուցողին՝ վատ առաջադիմություն ունեցող երեխայի, ով դասի ավարտին պետք է ներկայացնի թե ի՞նչ արեցին այդ դասին ընթացքում ,ի՞նչ սովորեցին, ինչպե՞ս և այլն:Նա կարող է գրի առնել, նշումներ անել, նա ուզի թե չուզի կդառնա դասի մասնակից և ուշադիր կլինի, որպեսզի ոչինչ բաց չթողնի: Ապա ուսուցիչը ցույց է տալիս մի արկղ և ասում , որ

[3]Տես ՝ Գյուրջինյան Դ., Ալեքսանյան Թ., Գալստյան Ա., Մայրենի 6, Երևան, 2012,

այդ արկղում մի կարևոր բառ կա և որպեսզի դասը սկսվի անհրաժեշտ է գուշակել այդ բառը: Գուշակելու համար պետք է պատասխանեն մի շարք հարցերի և այն պատասխանը որը կլինի տվյալ հարցինը կօգնի բառ կազմել: Յուրաքանչյուր պատասխանից առանձնացնում ենք առաջին տառը և միմյանց միացնելով բառ կազմում: Այսպես՝

Հարց 1

Միայն մեկ իմաստ արտահայտող բառը կոչվում է...

Պատասխան ՝ մենիմաստ

Առանձնացնում ենք առաջին տառը, և այն է ՝ Մ, գրում ենք գրատախտակի վերևի հատվածում:

Հարց 2

Որ բանաստեղծությունից է տվյալ հատվածը:

Եվ երկնքում անծիր

Շողշողացին բազում

Ցորեն-ցորեն աստղեր:

Պատասխան ՝ Աստղեր

Առանձնացնում ենք առաջին տառը, և այն է՝ Ա

Գրատախտակին Մ-ի կողքին գրում ենք Ա:

Հարց 3

Ո՞ր բառն է բաց թողած տրված օրհնանքում:

... որդով սեղան նստես:

Պատասխան՝ Յոթ

Առանձնացնում ենք Յ տառը և գրում ՄԱ տառակապատկության կողքին. գրատախտակին գրված է ՄԱՅ և մնում է վերջին հարցը.

Հարց 4

Հայոց այբուբենի ո՞ր տառի անունն է «ՐԵ».

Պատասխան՝ Ր

Եվ այս տառը նույնպես գրում ենք գրատախտակին. այսպիսով հնչել են բոլոր հարցերը և գտել ենք պատասխանները. գրատախտակին գրված է ՄԱՅՐ բառը. ուսուցիչը արկղից հանում է բանալի բառը և ցույց տալիս աշակերտներին :

Իրականացնում ենք «ես ասեմ, դու կռահիր» մեթոդը:

Աշակերտներից մեկը գալիս է գրատախտակի մոտ և դեմքով շրջվում դեպի դասարանը, թիկունքով՝ էլեկտրոնային գրատախտակին:

Էլեկտրոնային գրատախտակին իրար հաջորդելով ցուցադրում ենք նկարները,դասարանը բացատրում է թե ինչ է պատկերված, իսկ այն աշակերտը, որը չի տեսնում սկսում է կռահել:

Էլեկտրոնային գրատախտակին նախ հայտնվում է հետևյալ նկարը.



Անհրաժեշտ է նախապես հարստացնել երեխաների գիտելիքները նշված նկարների մասին:

Աշակերտը կռահում է, որ ՄԱՅՐ ՀԱՅԱՍՏԱՆՆ է պատկերված:

Ապա հայտնվում է մյուս նկարը՝

Պատասխան՝ Մարիամ Աստվածածինն է մանուկ Հիսուսի հետ

Հաջորդը և այսպես մինչև բոլոր նկարներին կանդրադառնան: Գրատախտակի մոտ կանող են կանգնել տարբեր աշակերտներ:



Ուսուցիչ՝ սիրելի երեխաներ ,մորն են նվիրված բազմաթիվ երգեր, ստեղծագործություններ, կտավներ, այս գեղեցիկ էակին մենք միշտ փառաբանել ենք.եկեք երգենք հայ գրականության մեջ յուրահատուկ տեղ զբաղեցնող մի ստեղծագործության հիման վրա գրված երգը.

Հնչում է Համո Սահյանի ստեղծագործության հիման վրա գրված երգը՝ ՄԱՅՐՍ.

Երգում են բոլորը, որից հետո շարունակում ենք այսպես.

Նախապես հանձնարարված է եղել հեռախոսով նկարել մայրիկի առօրյան և տեսանյութ պատրաստել այդ մասին, որից հետո հարցազրույց վերցնել մայրիկից: Ուսուցիչը նախապես տեղյակ է պահում ծնողին կամ օրինական ներկայացուցչին, որ երեխային մի այդպիսի հանձնարարություն է տալու և խորհուրդ է տվել նախապատրաստվել, որովհետև մայրիկի առօրյան և տված հարցազրույցը ուսումնական և դաստիարակչական մեծ նշանակություն պետք է ունենան երեխային համար:

Սովորողները ներկայացնում են հարցազրույցը , որտեղ մայրիկը պատմում է թե ինչպե՞ս սկսվում իր առօրյան, արդյոք ինչպիսի՞ աշխատանքներ է նա կատարում, ի՞նչն է փորձում անպայման հասցնել այդ օրը, ինչու՞ և այլն:

Ահա այսպես ՝ համագործակցելով ծնողի հետ , ուսուցիչը աշակերտներին հաղորդակից է դարձնում մայրիկի առօրյային, երեխան սկսում է գնահատել մոր աշխատանքը, սովորել նրանից , կրթվել: Այսպես մենք մի քանի ուսումնական և դաստիարակչական հարցեր ենք լուծում:

Շարունակելով դասը ուսուցիչն ասում է, որ մեր ազգը, մեր ժողովուրդը շատ բարձր է գնահատում մորը, մեր կյանքում էլ ամենասուրբ և ամենանվիրական երևույթներին մենք ՄԱՅՐ անվանումն ենք տալիս և գրատախտակին գրում ենք.

ՄԱՅՐ ԳԵՏ,

ՄԱՅՐ ՀԱՅՐԵՆԻՔ,

ՄԱՅՐԵՆԻ,

ՄԱՅՐԱՔԱՂԱՔ,

ՄԱՅՐ ՀՈՂ

ՄԱՅՐ ԼԵԶՈՒ,

Այստեղից էլ անցում ենք կատարում դասի լեզվական կողմին. աշակերտները միանգամից արդեն տեսան այս բառի բազմիմաստ լինելը և ուրեմն ուսուցիչը հարց է տալիս.

- Երեխաներ, կարելի՞ է ասել, որ ՄԱՅՐ բառը բազմիմաստ է, եթե այն այսքան իմաստներով մենք կիրառում ենք.

Պատասխանը միանշանակ կլինի դրական, ուստի հարցնում ենք նաև մենիմաստ և բազմիսատ բառերի սահմանումները:

Դասարանը բաժանում ենք երկու խմբի , յուրաքանչյուր խմբին տալիս ենք մեկական պաստառ և գունավոր նշագրիչներ:

Գրատախտակին գծում ենք Т-ձև աղյուսակը:

Էլեկտրոնային գրատախտակին հայտնվում է սահիկ հետևյալ բառերով.

Երկուշաբթի, ճյուղ, բզեզ, առնել,օդաչու, նուրբ,դեղձանիկ, ծաղիկ, վարձ,գլուխ,տուն,բերքառատ, ինքնաթիռ,արագիլ, բազկաթոռ,ընթերցել:

Հանձնարարում ենք մի թիմին դուրս գրել մենիմաստ բառերը, մյուսին՝ բազիմաստ:

Ստացվում են պաստառ, համապատասխան առաջադրանքով:

ՄԵՆԻՄԱՍՏ	ԲԱԶՄԻՄԱՍՏ
Երկուշաբթի ,բզեզ, օդաչու , ծաղիկ, վարձ,	ճյուղ,առնել, նուրբ,
Դեղձանիկ, ինքնաթիռ,արագիլ,բազկաթոռ,	գլուխ, տուն, բերքառատ
Ընթերցել,	

Սա աշխատանքի սկիզբն է:Բառերը ներկայացնելուց և ուսուցչի հետ ստուգելուց հետո ամեն թիմ իր բառերը գրում է գրատախտակին: Ուսուցիչը հանձնարարում է առանձնացրած բառերով կազմել տեքստ և ստացած բովանդակությունը նկարել: Զարգանում է սովորողների ստեղծագործական միտքը:

Առաջին թիմը ստացավ այսպիսի տեքստ:

Երկուշաբթի Արամը դպրոց չգնաց ՝ հիվանդ էր: Նա նստել էր բազկաթոռին և կարդում էր մի հետաքրքրաշարժ գիրք՝ ճամփորդության մասին: Գիրքը սկսվում էր այս տողերով.

Օդաչուն առաջին անգամ էր ինքնաթիռ վարում: Նա զգաց թե ինչպես ինքնաթիռը բարձրանում էր շարունակ: Մի քանի վայրկյանում նա բարձրացավ սկզբում դեղձանիկի, հետո բզեզի և ահա նաև արագիլի նախընտրած բարձրությունից էլ վեր:

Երկրորդ թիմն ՝ այսպիսի.

Տան դիմաց մի գեղեցիկ ծաղկանոց կար, ետևում՝ հսկայական հողատարածք: Ծառի ճյուղերը կախվել էին այնքան, որ հասել էին նուրբ ծաղկին: Տարին բերքառատ էր: Աշխատասեր գյուղացուն բնությունը շռայլորեն վարձատրեց այդ տարի:

Սա «Շրջագայություն պատկերասրահում» մեթոդն էր, որը զարգացնում է սովորողների ստեղծագործական միտքը: Աշխատանքը կատարելուց հետո ուսուցիչը հանձնարարում է նկարած նկարին ցանկացած հատվածում ավելացնել մոր կերպարը, նկարել մայրիկին և մանրամասնել, թե ինչու հենց այդ հատվածում են նկարել մորը:

Ուսուցիչն ասում է՝ հիրավի,մայրը միշտ մեզ հետ է, մեր ընկերն է ու խորհրդատուն, մեր աջակիցն է, պահապանը. բազմիմաստ բառերից ամենայուրահատուկին՝մայրիկին էր նվիրված մեր այսօրվա դասը, եկեք դիտենք ձեր մայրիկի հետ համատեղ լուսանկարները:

Էկրանին սահիկաշարն է կամ տեսանյութը մայրիկի և երեխայի համատեղ նկարներով հավաքած:

Դասի ավարտին գնահատվում են աշակերտները և հանձնարարում տնային աշխատանքը, ապա լսում ենք դասի զեկուցողին, ով ամփոփում է դասը:

Սովորողներին հնարավորություն ենք տալիս գնահատել դասը.

Նրանք մոտենում են գրատախտակին և կպչուն թղթերով գնահատում ըստ սմայլիկների.

Սրտաձև կպչուն թղթերը փակցնում են համապատասխան սմայլի տակ.

Դրանք չորսն են՝

ՇԱՏ ՀԵՏԱՔՐՔԻՐ ԴԱՍ ԷՐ

ՁԱՆՁՐԱՆՈՒՄ ԷԻ

ՇԱՏ ՆՈՐ ԲԱՆ ՍՈՎՈՐԵՑԻ

ԷԼ ՉԵՄ ՈՒԶՈՒՄ ՆՄԱՆ ԴԱՍԵՐ ԼԻՆԵՆ

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1.Այսօրվա երեխայի՝ վաղվա քաղաքացու դիմագիծը ուղղակի կախում ունի այն բանից, թե որոնք են նրա ծնողների, մերձավորների առաջատար պահանջմունքները և հարկ եղած դեպքում որ պահանջմունքը որին են զոհում, ասենք՝ նյութական շահը պատվի՞ն , թե՞ պատիվը՝ շահին:

2. Մանկության տարիներին անտեսված, չկարևորված, չգնահատված երեխան մեծանում է՝ գնահատվելու, արժևորվելու մշտական կարիքով:

3. Թե՛ դպրոցը, թե՛ ընտանիքը պատասխանատու են երեխայի մեջ սեփական անձի նկատմամբ հարգանքի, արժևորման, բարձր ինքնագնահատականի դաստիարակության հարցում:

4.Շատ բան արած կլինի ծնողը իր զավակի հոգեկան հարստության համար, եթե նրա գիտակցությունն ուղղի բարոյապես գեղեցիկին, հակի նրան դեպի բարոյապես գեղեցիկ արարքները:

5. Դաստիարակել երեխայի մեջ գեղագիտական զգացմունք նշանակում է նաև ապահովել նրա կենցաղի, սովորությունների գեղեցկությունը:

6.Կյանքի կենդանի տպավորություններն անհամեմատ զորեղ են ու ներգործուն: Երեխայի զգայուն հոգին որսում է մարդկային հարաբերությունների այնպիսի նրբերանգներ, որ շատ անգամ կարող են վրիպել չափահասների ուշադրությունից:

7. Ծնողը մշտապես պետք է զբաղվի ինքնակրթությամբ, որպեսզի դաստիարակի երեխայի նախ ինքը պետք է լինի դաստիարակված և բարեկիրթ, իսկ ուսուցիչը որպեսզի կարողանա սովորողների մեջ արժեհամակարգ ձևավորել՝ նախ ինքը պետք է լինի այդ արժեհամակարգի կրողը:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

Անաստասյան Բ. Հ., Ազգային ավանդույթների, սովորույթների դերը երեխաների ընտանեկան դաստիարակության գործում, Ընտանիք և ազգային հոգեբանություն նյութերի ժողովածու, Եր., ՀՀ լուսավորության նախարարության մանկավարժական գիտությունների գիտահետազոտական ինստիտուտ, 1991,

Գյուրջինյան Դ., Ալեքսանյան Թ., Գալստյան Ա., Մայրենի 6, Երևան, 2012,

Сухумлинский В. А., Избранные педагогические сочинения в 3 т., т. 1, стр. 87,